ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 65-Ն ՀՐԱՄԱՆԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, սույն գործով քննության առնելով որպես պատասխանող ներգրավված ՀՀ առողջապահության նախարարից տեղեկություններ պահանջելու հարցը, **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32 և 42-րդ հոդվածների իրավակարգավորումները և նկատի ունենալով այն, որ պահանջվող տեղեկությունները կարող են նշանակություն ունենալ սույն գործի արդյունավետ քննության համար՝ ՀՀ առողջապահության նախարարից պահանջել հինգ աշխատանքային օրվա ընթացքում Սահմանադրական դատարանին տրամադրել.

1. Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) հետազոտության անցկացման համար գործող նվազագույն և առավելագույն գների վերաբերյալ տեղեկություններ,

2. գրավոր և բանավոր բացատրությունների շրջանակներում համապատասխան հղումների միջոցով կամ այլ կերպ վկայակոչված կորոնավիրուսային հիվանդության

(COVID-19) դեմ պատվաստված անձանց հիշյալ հիվանդությամբ վարակելիության և վարակվելիության վերաբերյալ միջազգային և/կամ այլ մասնագիտացված կազմակերպությունների փորձագիտական վերլուծությունների արդյունքում ձևավորված հետազոտությունների (վերաբերելի հատվածների) և/կամ կարծիքների և/կամ առաջարկությունների հայերեն թարգմանությունները:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 նոյեմբերի 2021 թվականի
ՍԴԱՈ-236